

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/2

2 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց քաղաքացի Որմիզդուխտ Ասատրյանի 29.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 30.08.2014 թ-ի թիվ 248 որոշման դեմ:

#### **Քաղաքացի Որմիզդուխտ Ասատրյանի գանգատում բերված փաստարկները.**

ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 30.08.2014 թ-ի թիվ 248 որոշումն անհիմն է և վերանայման կարիք ունի ստորև ներկայացվող անվիճելի փաստարկների հիման վրա.

2005 թ-ի դեկտեմբերի 23-ին Թալինի ՏՀՏ է ներկայացվել հայտարարություն Ա/Ձ Որմիզդուխտ Ասատրյանի գործունեությունը անժամկետ դադարեցնելու և հսկիչ դրամարկղային մեքենան (ՀԴՄ) հաշվառումից հանելու վերաբերյալ: 23.12.2005 թ-ին ՀԴՄ-ն հանվել է գրանցումից: 2006 թ-ի փետրվարին Որմիզդուխտ Ասատրյանը դիմել է Թալինի ՏՀՏ ԱՁ-ն լուծարելու համար և դիմումին կից հանձնել է ԱՁ-ի պետ. ռեգիստրի վկայականը, որի հիման վրա 22.03.2006 թ-ին ՀՀ ԿԱ ՀՊԾ-ի պետի թիվ 1002968 հանձնարարականի համաձայն ԱՁ Որմիզդուխտ Ասատրյանի մոտ անցկացվել է լուծարային ստուգում և 12.04.2006 թ-ին կազմվել է լուծարային ստուգման թիվ 1002968 ակտը, որով խախտում չի հայտնաբերվել: 2010 թ-ին Թալինի ՏՀՏ-ն հայցադիմում է ներկայացրել ՀՀ Վարչական դատարան Ա/Ձ Որմիզդուխտ Ասատրյանից 369.619 դրամ պարտադիր սոցիալական ապահովության վճար (որն առաջացել է 2006-2010 թ.թ.) ապառքի գումարը բռնագանձելու վերաբերյալ, որը ՀՀ Վարչական դատարանի 18.08.2012 թ-ի թիվ ՎԴ (2953) 05/10 վճռով մերժվել է, հաշվի առնելով, որ պատասխանողի՝ Ա/Ձ Որմիզդուխտ Ասատրյանի գործողությունները համահունչ են «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի պահանջներին: Հետևապես, եթե վարչական դատարանը գտել է, որ Ա/Ձ Որմիզդուխտ Ասատրյանը օրենքի ուժով ազատվում է 2006-2010 թվականների անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ հաշվարկված ու չվճարված պարտադիր սոցիալական ապահովության վճարների վճարումից, ապա նույն օրենքի ուժով Ա/Ձ Որմիզդուխտ Ասատրյանի նկատմամբ չէր կարող 2010 թ-ի հունիսից 2012 թ-ի դեկտեմբեր ամիսների համար հաշվարկվել պարտադիր սոցիալական ապահովության վճարներ:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետը, քննարկելով ֆիզիկական անձ Որմիզդուխտ Ասատրյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ Անհատ ձեռնարկատեր Որմիզդուխտ Ասատրյանը /ՀՎՀՀ 56204071. հասցե՝ Արագածոտնի մարզ, գ. Կաքավաձոր/ լուծարվել է 09.08.2013 թ-ին, սակայն 29.07.2014 թ-ի դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամտուների գծով պարտավորություն սոցիալական ապահովության վճարի գծով 256.888 դրամի չափով, որից ապառք 155.000 դրամ, տույժ 101.888 դրամ, որն առաջացել է «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն 2010 թ-ի հունիսից 2012 թ-ի դեկտեմբեր ամիսների համար հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովության վճարի և այն չվճարելու հետևանքով «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն

հաշվարկված տույժի՝ գումարներն օրենքով սահմանված ժամկետներում չվճարելուց, որոնք ենթակա են գանձման: Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր և տուգանքներ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով Աշտարակի ՏՀՏ պետը 30.08.2014 թ-ին կայացրել է թիվ 248 որոշումը Որմիզդուխտ Ասատրյանից 256.888 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ մինչև 31.12.2012 թ-ը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անհատ ձեռնարկատերերը պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամի չափով, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Ընդ որում՝ պետական գրանցման վկայականը ժամանակավոր հարկային մարմին հանձնած (մինչև 25.07.2012 թ-ը) և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Դա նշանակում է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնած չլինելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր էր վճարել 5000 դրամ նվազագույն սոցիալական վճար՝ անկախ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Որմիզդուխտ Ասատրյանի կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին չի հանձնվել, ինչը և հիմք է հանդիսացել նվազագույն սոցիալական վճարի գծով պարտավորությունների հաշվարկման համար:

Միևնույն ժամանակ հարկ է, որ ՀՀ վարչական դատարանի 18.08.2012 թ-ի թ-իվ ՎԴ/2953/05/10 վճռի համաձայն Ա/Ձ Որմիզդուխտ Ասատրյանը պարզեցված հարկի գծով 25.06.2010 թ-ի դրությամբ ունեցել է 123.251 դրամ պարտավորություն, որն առաջացել է 2005 թ-ի պարզեցված հարկի գծով 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների համար ներկայացված հաշվարկներով: Հաշվի առնելով նշված հանգամանքը Թալինի ՏՀՏ կողմից չեն կիրառվել 2005 թ-ի «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի դրույթները:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 30.08.2014 թ-ի թիվ 248 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**

